

**ՓՈՔՐ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ն. Մ. Մելքումյան

Հոդվածը վերաբերում է հայոց պատմության դասավանդման գործընթացում փոքր խմբային աշխատանքների կազմակերպման, համագործակցային հմտությունների, մտածողության հմտությունների, ինքնաճանաչման, ինքնուղղորդման, հմտությունների, դպրոց-միջավայր հարցերին: Փոքր խումբը իր հիմքում ունի առնվազն երեք առավելություններ: Այն նպաստում է ոչ միայն գիտելիքի երկարաժամկետ պահպանմանը, այլև հասկացությունների սկզբունքների և իրադարձությունների ըմբռնմանը, հստակեցնում է հիմնական սոցիալական հմտությունները, դրական ազդեցություն է ունենում աշակերտների տեսակետների, մոտեցումների և արժեքների վրա:

Նոր հասկացություններ՝ համագործակցային հմտություններ, մտածողության հմտություններ, մշտական խմբեր, ֆորմալ խմբեր, ոչ ֆորմալ խմբեր:

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակն է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված է ակտիվորեն, և գիտելիքը մշակվում և հարմարեցվում է վերափոխման միջոցով:

Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային աշխատանքներ կազմակերպելու միջոցով հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը, (ինքնաճանաչման և ինքնաուղղորդման հմտություններ): Երբ համագործակցային ուսուցումը կիրառվում է խորությամբ, այն դառնում է դասարանի կամ երբեմն նաև ամբողջ կազմակերպության (դպրոց, միջավայր) աշխատանքային մշակույթ: Դա կրթության հանդեպ վերաբերմունք կամ մոտեցում է, որը ներառում է ուսուցման ժամանակակից հայեցակարգերը:

Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ,

- յուրաքանչյուր անհատի դարձնել ակտիվ և կարող՝ լինելու խմբի անդամ և համագործակցելու:

Խմբային աշխատանք կազմակերպելուց առաջ առաջին ամենակարևոր հարցը. ո՞րն է խմբի լավագույն չափը՝ 2, 3, թե՞ 4 անդամ:

Հինգ կամ 6 հոգանոցը շատ մեծ խումբ է, և այն դառնում է ավանդական խումբ, որտեղ համագործակցելը և արդյունավետորեն աշխատելը խիստ դժվարանում է (ունենք արդեն չեն մասնակցում ուսուցման գործընթացին):

Խմբերի տեսակներն են՝

- Հենակետային 1 մայր խմբեր (մշտական խմբեր)
- Փորձագիտական խմբեր (ֆորմալ խմբեր)
- Հատուկ տվյալ առաջադրանքի համար կազմված խմբեր (ոչ ֆորմալ խմբեր):

Զույգերը ամենալավն են, քանի որ հնարավորություն կա առաջադրանքի մասին շատ խոսելու և օգտագործելու շատ ժամանակ:

Ինչպե՞ս կազմել խմբեր: Շատ կարևոր է համաձայնության գալ աշակերտների հետ խմբեր կազմելու մեթոդների և նպատակների շուրջ:

- Յուրաքանչյուրը պետք է սովորի արդյունավետ աշխատել խմբի ցանկացած անդամի հետ: Խմբերը կարող են կազմվել՝

- պատահականորեն
- ուսուցչի կողմից
- աշակերտների կողմից:

Խմբերը կարող են լինել՝

- տարասն՝ հիմնականում
- համասն՝ երբեմն:

Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը, անկասկած, փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների աշխատանքներում: Հակիրճ ձևակերպման դեպքում փոքր խմբային աշխատանքը նշանակում է ողջ դասարանի տրոհում երկուսից չորս աշակերտ ընդգրկող խմբերի՝ իրենց հանձնարարված ընդհանուր առաջադրանքը կատարելու նպատակով: Փոքր խմբային աշխատանքի հիմնական նպատակն է յուրաքանչյուր աշակերտի դարձնել ավելի սովորող անհատ՝ մյուսների հետ սոցիալական փոխազդեցության, հաղորդակցության, համագործակցության և հանձնարարված առաջադրանքների կատարման ակտիվ մասնակցության միջոցով: Փոքր խմբային աշխատանքը դասավանդման և ուսուցման առումով ունի առնվազն երեք առավելություն: Առաջին՝ փոքր խմբային աշխատանքը միտված է աշակերտների ակադեմիական ուսուցման բարելավմանը: Այն ոչ միայն դրական ազդեցություն է ունենում գիտելիքի երկարաժամկետ մտապահման համար, այլ նաև նպաստում է հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ըմբռնմանը: Այդ ամենը հիմնականում պայմանավորված է ուսուցման գործընթացի ժամանակ խոսելու, քննարկելու և փոխազդելու ընդլայնված հնարավորություններով: Երկրորդ՝ փոքր խմբային աշխատանքը հնարավորություն է ընձեռում աշակերտներին հանդես գալ այնպիսի իրավիճակներում, որոնցում նրանք կարող են զարգացնել սոցիալական և միջանձնային հմտություններ՝ ճանաչողական նպատակներին հասնելուն համընթաց: Լավ կազմված փոքր խմբային աշխատանքի դեպքում հստակեցվում են հիմնական սոցիալական հմտությունները, իսկ այնուհետև՝ հետևողականորեն ուսուցանվում: Երրորդ՝ փոքր խմբային աշխատանքը դրական ազդեցություն ունի ընդհանրապես դպրոցի և մնացած աշակերտների և, մասնավորապես, սովորելու և ուսման վերաբերյալ աշակերտների տեսակետների, մոտեցումների և արժեքների վրա:

Փոքր խմբային աշխատանքը հանձնարարությունների որևէ մեկ մեթոդ չէ, այն ավելի շատ մոտեցում է, որի հիմքում ընկնում է սոցիալական փոխներգործության խթանումը և փոխադարձ համագործակցությունը փոքր խմբերում իրավիճակային ուսուցման ժամանակ: Ուստի, այն տարբեր անվանումներ ունի, առավել հաճախ՝ համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:

Փոքր խմբային աշխատանքի լայն տարածմանը նպաստող գործոնները բազմաթիվ են: Առաջինը այդ ուսուցման անհատական տարբերությունների ակոմոդացիային հարմարեցման հնարավորությունն է դասարանում: Խմբային աշխատանքի ուսուցման մեթոդներից շատերը անհատական տարբերությունները դիտարկում են որպես ուսուցումը և ըմբռնումը խթանող պոտենցիալ հնարավորություններ, մինչդեռ ուսուցման ավանդական մեթոդները այս տարբերությունները դիտարկում են որպես անհարմարություն, որը պետք է պահել հսկողության տակ: Երկրորդ գործոնը առնչվում է այն հնարավորություններին, որ խմբային աշխատանքի ուսուցումը առաջարկում է բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու համար: Ակադեմիական ուսուցման նպատակների գերակայող դերի հետևանքով աշխարհն այսօր կոչ է անում ավելի շատ հետադարձ լինել աշակերտի անձնական, սոցիալական և բարոյական զարգացմանը:

Փոքր խմբային աշխատանքը արդյունավետ կազմակերպելու համար ուսուցիչները պետք է դասարանը բաժանեն երկու, երեք կամ չորս աշակերտներից բաղկացած խմբերի և ապահովեն, որ յուրաքանչյուր խմբի աշխատանքներում առկա լինեն ներկայացվող հիմնական բաղադրիչները: Այդ տարբեր են՝ ուսուցողական խմբերում դրական սոցիալական փոխկապվածությունը, արդյունավետ ուսուցման համար անհատական հաշվետվությունը և պատասխանատվությունը, անհատական կոլեկտիվ գործընթացների վերաբերյալ մոտորումները և քննադատական վերանայումը, ինչպես նաև ուսումնական ծրագրերի և ուսումնական նյութերի վերակառուցումը խմբային առաջադրանքների համար: Ուսուցչին անհրաժեշտ է մանրամասն դիտարկել, պլանավորել և ուղղորդել դարձնել համագործակցային ուսուցման թվարկված հիմնական տարրերից յուրաքանչյուրին: Ավելին, անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել սոցիալական հմտությունները և քննարկել այն մոտեցումները, որոնք բնորոշ և անհրաժեշտ են դասարանում բաց հաղորդակցության, աջակցող փոխադարձ ներգործության և ապահով ուսուցման միջավայր ստեղծելու համար:

Ստորև ներկայացնում են «Հայոց պատմություն» առարկայից դասապլան, որը կազմված է փոքր խմբային աշխատանքի դասավանդման և ուսուցման բաղադրիչների հիման վրա:

Դասընթացը - Հայոց պատմություն,

Դասարանը - 8-րդ

Թեման – Ֆրիտյոֆ Նանսենի կյանքը և գործը:

1. Թեմայի համառոտ բովանդակությունը:

Ազգերի լիգան, որը ստեղծվել է 1919թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշմամբ, կոչված էր ապահովելու խաղաղություն և ժողովուրդների միջև զարգացնել համագործակցության ոգին:

Իր գործունեության ընթացքում Ազգերի լիգան մի քանի անգամ անդադարձ է կատարել Հայկական հարցին:

Ազգերի լիգայի շրջանակում անգնահատելի էր նորվեգացի բեռնախույզ, գիտնական, հասարակական գործիչ և մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի (1861-1930թթ.)՝ ի նպաստ հայ ժողովրդի ծավալած մարդասիրական գործունեությունը:

Հանդիսանալով լիգայի գերագույն կոմիսար, միաժամանակ գլխավորելով լիգային կից գործող հայրենադարձության հանձնաժողովը (1925-1925թթ.)՝ Նանսենը մեծ աշխատանք է տարել հայոց ցեղասպանության հետևանքով աշխարհասփյուռ հայությունը խորհրդային Հայաստան հայրենադարձելու և տեղում օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

Ազգերի լիգայի 1924թ. հուլիսի 12-ի որոշմամբ Հայոց ցեղասպանությունից մազապործ շուրջ 320.000 հայերի աշխարհի տարբեր երկրներում շնորհվեցին նանսենյան անձնագրեր:

2. Նպատակը և խնդիրները

- Վերհիշել առաջին համաշխարհային պատերազմի պատճառները
- Պարզաբանել երիտթուրքերի կողմից Հայոց ցեղասպանության ծրագրման նպատակը և իրագործման ուղիները
- Թվարկել հասարակական-քաղաքական և պետական գործիչներին, որոնք հայերի զանգվածային կոտորածների դեմ բողոքի իրենց ձայնն են բարձրացրել
- Ուսումնասիրել Ֆ. Նանսենի կենսագրությունը և մեծ հումանիստի հայանպաստ քայլերն ու ջանքերը
- Քննարկել Ֆ. Նանսենի «Խաբված ժողովուրդ» գրքում մեր ազգի պատմական ճակատագիրը 20-րդ դարի 20-ական թվականներին:
- Ներկայացնել թուրքական անմարդկային բռնություններն ու դիվանագիտական խարդավանքները, Եվրոպական բազմադիմի ու շահադիտական քաղաքականությունը
- Իմանալ Ֆ. Նանսենի կյանքի և գործունեության մասին պատմող երեք գրքերը՝ «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» (հեղինակ՝ Ֆ. Նանսեն), «Քրիստոսի ավետարանի մարդկային թարգմանությունը» (Ֆելիքս Խաչինյանի խմբագրությամբ), «Ֆրիտյոֆ Նանսենը հետազոտող» (հեղինակ՝ Էդուարդ Շելտսն):

3. Ուղենիշներ (ուսումնառության արդյունքներ)

- Ծանոթանալ բաշխիչ նյութին՝ «Ֆ. Նանսենի կյանքը և գործը»
- Տարանջատել գլխավորը երկրորդականից, զարգացնել տեսականը գործնականի հետ՝ կատարելով վերլուծություն և համեմատություն
- Ձևավորել փոքր խմբեր, խթանել համագործակցությունը, ինքնադրսևորման հնարավորություն ընձեռել

4. Հիմնական հասկացություններ, տերմիններ

Ազգերի լիգա, մարդասիրական գործունեություն, գերագույն կոմիսար, հայրենադարձության հանձնաժողով, Հայոց ցեղասպանություն, աշխարհասփյուռ հայություն, հայրենադարձություն, նանսենյան անձնագիր:

Ուսուցում (նյութեր, միջոցներ, մեթոդներ և հնարներ)


Դասագիրք, բաշխիչ նյութ, քարտեզներ (ՀՀ, ԼՂՀ, Նորվեգիա), Ֆ. Նանսենի լուսանկարը, ցուցադրաստառ:

Արդյունավետ կարող է լինել խոսքային, զննական, գործնական և մասնակի որոնողական մեթոդների զուգակցումը: Տեսողական ուսուցում, փոքր խմբային ուսուցում, մտազրույց, 3-րդ աստիճանի շարադրանք («Երախտագիտության խոսք»):

• Դասը սկսել հարցադիմումներով, որի արդյունքում կներկայացվեն պատճառահետևանքային կապերը:

1. Ինչու՞ էր աշխարհը 20-րդ դարասկզբին հայտնվել համաշխարհային վտանգի առջև
2. Ո՞ր ռազմաքաղաքական խմբավորումներն էին ձևավորվել պատերազմի նախօրեին
3. Ո՞ր պետությունը օգտագործեց իրավիճակը՝ իրականացնելու 1910-1911թթ. Սալոնիկում կայացած գաղտնի խորհրդակցության ծրագրերը:

Մտազարդի միջոցով թվարկել առաջադեմ գործիչներին, որոնք դատապարտել են նրիտությունների դիվային ծրագիրը:



Բախշիչ նյութը՝ «Ֆ. Նանսենի կյանքը և գործը» բաժանել 4 հավասար մասի՝

ա) Ազգերի լիգայի դիրքորոշումը

բ) Մեծ հումանիստի կենսագործունեությունը

գ) «Հայ դարի հենասյունը»

դ) Գրական ժառանգությունը:

• Վերը նշված քայլերը իրագործելուց հետո խմբերը պետք է ձևավորեն ցուցադրաստաղ:

• Երեք թուղթի ընթացքում աշակերտները պետք է շարադրեն, թե ինչ սովորեցին թեման ուսումնասիրելիս, ապա նրախտագիտության խոսքն ուղղեն մարդասերին:

Գնահատում

• Գնահատվում է աշակերտի յուրացումը: Հաշվի առնել խմբի աշակերտների համագործակցությունը, փոխգործողությունները, կատարած առաջադրանքները, ինքնագնահատումը:

Գնահատման թերթիկ (1-10 միավոր)

Խումբ	Ինքնագնահատում	Խմբերի գնահատում	Անկախ փորձագետ	Ուսուցիչ	Վերջնական գնահատականը
I					
II					
III					
IV					

Գրականություն

1. Պատմություն և հասարակագիտություն (Ուսուցչի 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութ), Եր., 2007:
2. Համագործակցային ուսուցում, Եր., 2006:
3. Հայոց պատմություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Եր., 2007:
4. Իրավունք (Մեթոդային ձեռնարկ ուսուցչի համար), Եր., 2004:

Резюме

Статья касается процесса преподавания истории армянского народа, посредством организации небольших целевых групп, что способствует приобретению совместных навыков мышления и содействия, а также вопросов взаимодействия школа - окружающая среда.

Небольшие группы в своей основе имеют не менее 3-х преимуществ, которые способствуют не только хорошему запоминанию знаний, но и других понятий, принципов, осмысления действительности, уточняет основные социальные навыки, положительно влияют на оценку исторических ценностей учащимися.

Новые понятия - Совместные навыки мышления. Постоянные группы. Формальные группы. Неформальные группы.